12-ՐԴ ՆԻՍՏ

30 օգոստոսի, երեկոյան ժամը 7, 1918թ.

Նիստը բանալով՝ պ. նախագահն հայտարարում է օրակարգը.

1. Բժշկասանիտարական հանձնաժողովի շաբաթական զեկուցումը.
2. Պարենավորման հանձնաժողովի շաբաթական զեկուցումը.
3. Գաղթականական հանձնաժողովի շաբաթական զեկուցումը.
4. Դպրոցական հանձնաժողովի օրինագիծը դպրոցական վարչության կազմակերպման մասին.
5. Ընթացիկ հարցեր:

Պ. նախագահն հայտարարում է, որ ստացված է հատուկ զորական հանձնաժողովի մասին մի օրինագիծ, որը հանձնվում է օրենսդրական հանձնաժողովին:

Բժշկա-սանիտարական հանձնաժողովի կողմից զեկուցում է բժ. Հ. Տեր-Միքայելյանը, որը մանրամասն վիճակագրական տվյալներով ապացուցում է խոլերայի տարածման չափը: Նրա բերած թվերից երևում է, որ խոլերան վերջին ժամանակներս սկսել է պակասել: Նա նկատում է, որ այս գործին թե՝ բժիշկները, թե՝ ֆելդշերները և թե՝ հատկապես ինտելիգենցիան աջակցություն չի ցույց տալիս, նույնիսկ խուսափում է: Առաջարկում է բժշկական ուժերի զորակոչ հայտարարել: Շեշտում է նաև, որ դեղեր չկան, որը նույնպես նպաստում է խոլերայի դեմ մաքառելու անզորությանը:

---

* Այդպես է տեքստում, պետք է լինի՝ խորհրդի: Ծանոթ. կազմ.:

Զեկուցման առթիվ տեղի է ունենում վիճաբանություն:

Պատգ. *Ս. Մալխասյանը* զեկուցման ընդհանուր հիմունքները և խոլերայի տեսակետից երկրի ծանրության կացությունն ընդունելով, առաջարկում է կտրուկ միջոցներ ձեռք առնել խոլերայի դեմ մաքառելու համար և որ ներքին գործերի նախարարը ունենա գործով զբաղվող օգնական:

Պատգ. *Ս. Տիգրանյանի* մի շարք հարցերին զեկուցողը պատասխանելով, հայտնում է, որ հանձնաժողովը նիստեր ունեցել է, շրջագայել է քաղաքը և գավառի մի մասը և այն տպավորությունն է ստացել, որ կանոնավոր միջոցներ ձեռք չեն առնված. օրինակ՝ էջմիածնի անմաքրությունը, որբանոցի երեխաների մեծ մահացությունը, Երևան քաղաքը մաքրելու անհաջող փորձը և այլն: Բայց վերջերս նոր բժիշկներ, ֆելդշերներ և քույրեր են ուղարկված կառավարության կողմից: Նկատելի է նաև այն դժբախտ հանգամանքը, որ թե՛ բժշկական կազմը և թե՛ ինտելիգենցիան այս պայքարին չեն մասնակցում և նույնիսկ խուսափում են: Բժիշկը առաջարկում է այս մասին լուրջ հոգ տանել:

Պատգ. *Խարմանդարյանը*, շեշտելով մեր ինտելիգենցիայի և, մասնավորապես, բժիշկների հանցավոր վերաբերմունքը առհասարակ, նաև այս դեպքում, առաջարկում է բժիշկների մոբիլիզացիա կատարել և դրությունը այդպիսով փրկել: Ապա շեշտում է այն հանգամանքը, որ նման համաճարակների դեմ կռվելու համար նախապատրաստական աշխատանքներ իր ժամանակին չեն կատարված, օրինակ՝ Թիֆլիսից զանազան ներսրսկման հեղուկներ չեն բերել կամ այստեղ պատրաստել և այլն:

Պատգ. *Թորոսյան* - Այստեղ հարցերը սխալ հասցեով են ուղղվում. գործնական պատասխաններ ստանալու համար պետք է դիմել կառավարության և ոչ հանձնաժողովին: Պետք է դիմել կտրուկ միջոցների, չսպասել կառավարության օրենսգծին և հանձնարարել մեր հանձնաժողովին, որ մի օրվա ընթացքում կարևոր հարցերի կարգավորումը բերի խորհրդի նիստին:

Պատգ. *Զուբյան* - Զեկուցումից ծանր տպավորություն եմ ստանում: Կառավարությունն իր իրավունքներն է մտածում լայնացնել և իր խոստացած օրենսգծերը չի ներկայացնում: Առաջարկում է բժշկասանիտարական հանձնաժողովին արտակարգ լիազորություններ տալ՝ խոլերայի դեմ կռվելու համար:

Պատգ. *Ազատյան* - Երևանում քաղաքային ինքնավարություն գոյություն չունի և գործ չի կատարվում, պետք է նոր ընտրություն անել: Ներքին գործերի համապատասխան մինիստրություն չունենք: Նախարարը 20 օր է խոստացել է օրինագիծ առաջադրել մեզ խոլերայի դեմ կռվելու համար և մինչ այժմ չի արել: Նա կրթված է ստրաժնիկի և ֆելդֆեբելի հոգով: Եվ ես ասում եմ, թող կորչի՛ այդպիսի մինիստրը: Այստեղ, այս նիստին պետք է կամ նախարարը ներկա լիներ կամ նրա ներկայացուցիչը: Պարենավորման գործի պաշտոնյաները բյուրոկրատներ, ֆորմալիստներ են, որովհետև թույլ չեն տալիս հաց բերել. վարիչը չպետք է վստահանա միայն իր ուժերի վրա, որովհետև որքան էլ նա հերոսական ջանքեր թափի, իզուր է, նա պետք է դիմի ժողովրդի օգնությանը: Քաղաքը պետք է բաժանել մասերի, միլիցիան պետք է աշխատի, նրա թիվը շատ է, բայց գործ չի անում:

Պատգ. *Բուդաղյան* - Դեռևս կառավարության պատասխանն ու բացատրությունները չենք լսել, հետևապես դեռ վաղաժամ են անարդարացի հարձակումներն ու քննադատությունները:

Ընդմիջումից հետո ֆինանսների նախարար *Խ. Կարճիկյանը* պատգ. Հ. Ազատյանին պատասխանելով՝ ասում է. «Այսօր այս ամբիոնից հայտարարել են՝ «կորչի՛ մինիստրը»: Թող բոլորն իմանան, որ կառավարության մեկ անդամի գործունեության համար պատասխանատու է ամբողջ կազմը: Այստեղ քննում են նախարարի հոգեկան և դաստիարակչական անձնական կողմը, որ անվայել է թե՛ ամբիոնի և թե՛ անողի համար: Այդ քայլը պատիվ չի բերում այս հիմնարկությանը և անողին: Թերևս այդ ձևի քննադատությունը դուր է գալիս անողին, և նախագահությունն էլ իր կողմից թույլ է տալիս և կարգի չի հրավիրում, գուցե այդ էլ իր պատճառն ունի: Սակայն այդ ձևի հայտարարությունը կառավարությանը չի ստիպում վստահության քվեի հարց դնել: Բժշկա-սանիտարական հանձնաժողովը կարող է զեկուցանել միայն իր արածի մասին և ոչ կառավարության: Մենք մինչև այժմ չենք խուսափել ձեր հարցերին պատասխանելուց, այսօր էլ նախ դուք պետք է լսեիք կառավարության բացատրությունները, ապա ձեր վերաբերմունքը ցույց տաիք»:

Պատգ. *Ա. Մելիքյանն* ընդունում է, որ անտեղի վիճաբանություններ տեղի ունեցան և ստացան սույն բնույթը: Այս դրությունից դուրս գալու համար առաջարկում է հետևյալ բանաձևը, որը և անցնում է՝ ստանալով 30 ձայն թեր և 1 դեմ. «Լսելով բժշկա-սանիտարական հանձնաժողովի զեկուցումը խոլերայի մասին և տեղի ունեցած վիճաբանությունները, խորհուրդը հրավիրում է կառավարության ներկայացուցչին՝ զեկուցել հետևյալ նիստում իր գործունեության մասին համաճարակի դեմ և կազմած օրենսգծի մասին խոլերայի դեմ պայքարելու հարցի վերաբերյալ»:

Ապա պարենավորման հարցի մասին զեկուցանում է պատգ. *Մելիք Աղաջանյանը*.

Պատգ. *Հ. Ազատյանը* տալիս է անձնական բացատրություն, որ մինիստրին ֆելդֆեբել ասելիս նրա գործունեության սիստեմն է ի նկատի ունեցել և ոչ անձնականը:

Պատգ. *Հ. Սարգսյանը* կարծում է, որ պալիատիվ միջոցներով երկիրը սովից փրկել չի կարելի, այլ պետք է աշխատել ճանապարհները բանալ և Ռուսաստանից ու դրսից հաց ներմուծել:

Պատգ. *Հ. Ազատյան* - Հացը գողացվում է գող չինովնիկության կողմից. մենք չունենք պատասխանատու կառավարություն, ե՞րբ պետք է վերջինիս գործն իր ձեռքն առնի: Ե՞րբ պետք է զորական նախարարը պատժի գող ինտենդանտներին և վերջ տա բաշիբոզուկությանը: Չեմ հավատում, թե կառավարությունը ամբարներում հաց ունենա:

Պատգ. *Ս. Տեր-Մարտիրոսյանը* հայտնում է, որ քաղաքը 2 ամսվա հաց ունի և մտադիր է մեծ քանակությամբ գետնախնձոր ձեռք բերել հացի հետ խառնելու: Եթե այդ հաջողվի, քաղաքն ինն ամսով կապահովվի: Հացի մենավաճառը պետք է վերացնել և թույլ տալ ազատ առևտուր:

Խնդրի քննությունը հետաձգվում է առաջիկա նիստին, որ և նշանակվում է կիրակի օրը: Ապա ընտրվում են զորական հանձնաժողովի համար հետևյալ պատգամավորները ոչ ֆրակցիական, այլ անձնական կարգով.

1. Աբրահամ Մալխասյան
2. Ռուբեն Տեր-Մինասյան
3. Ս. Տիգրանյան
4. Դրո [Դրաստամատ Կանայան]
5. Գագա Տեր-Օհանյան
6. Գր. Տեր-Խաչատրյան, որից հետո նիստը փակվում է:

«Զանգ», 10 սեպտեմբերի 1918թ.: